

## ՄԱՅԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՅԵՔՍԱԿԻՐԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ  
ՈՒԹԻՐ

(Հարգանքներով)

Տուեալների զուգադիպումը շատ բացառիկ է եւ արտասովոր: Մեր գրականութեան այլ մեան վիճակում անմատչելի է այդպիսի մի մեծ ձեռնարկութիւն: Նրա պայմանները հնարաւորութիւն չեն ստեղծում մի գրասէրի համար, որ նա կարողանայ նախ նախապատրաստուել հիմնովին իւրացնել անգլիական լեզուն, ուսումնասիրել շէքսպիրագիտութիւնը, ապա նուիրուել անգլիական ազգի եւ միաժամանակ ամբողջ մարդկութեան հանճարի երկերի ամբողջական թարգմանութեան: Եթէ թշուառութեւն մի վայրկեան այդպիսի անիրագործելի պայմանների գոյութիւնը, ինչպէս թարգմանիչը պիտի հրատարակէր, այն եւս պատկերազարդ, երբ հայ մտաւոր հրապարակում գրքի պահանջ չկայ:

Շէքսպիրը թարգմանուած է ռուսերէն մի քանի անգամ, բայց ընդհանրապէս ամէն մի երկ առանձին թարգմանչի կողմից: Իսկ յանձին հայ թարգմանչի հրապարակ է գալիս նրա բոլոր երկերի թարգմանիչը, միաժամանակ եւ հրատարակիչը, ի հարկէ առանց մի օրեւէ վստահանութեան յետոյ տարածման մասին: Հայ գրականութեան համար րախտի մի մեծ խաղ է եղել, որ բանաստեղծական տաղանդը զուգադիպեր է դիւանագիտական կոչման յանձին օտար պետութեան մէջ գործող մի հայի, որի հետեւանօք նա կարողացել է կատարելագործել իւր լեզուագիտութիւնը եւ որպէս ինտելեկտ կազմակերպուել է եւրոպական ամենակուլտուրական խաւերի մէջ: Ահա թէ ինչու այն, որ անմատչելի էր մեր գրականութեան, տալիս է նրան պարսիկ պետութեան հայ ազգի դեսպանը:

Օտար պետական ասպարիզում մենք քիչ չենք տուել յայտնի գործիչներ. սակայն քիչերն են եղել սրանցից, որ կենդանի կապեր են պաշտպանել իրանց ազգի հետ: Իսկ մէկը, որ ապրէր նրա հոգսերով, միաժամանակ նուիրէր իւր ընդունակութիւնները եւ վաղ երիտասարդութիւնից սկսած մասնակցէր նրա ստեղծագործութեան — ի վերջոյ երկարատեւ աշխատութիւններից յետոյ պարգեւէր նրան գրականական այնպիսի մի գանձ, որպիսին է մեծ հանճարի հայերէն վերաբրտագրութիւնը — մի

ամբողջ կեանք պահանջող աշխատանք՝ արդէն շատ կը լինէր արտասովոր: Ահա թէ ինչու Յեքսպիրի խան Մասէհեանը բացառիկ դիրք է գրաւում օտար պետական ասպարիզում առաջացած հայազգի պետական դէմքերի մէջ: Ներկայ դէպքում վերստին երեւան է գալիս ցեղային առաւելումը բացառիկ պայմանների մէջ, պէտք է աւելացրած, շնորհիւ վերջինների որովհետեւ մայրենի պայմանները դեռ ճնշել են նոյն առաւելումի համար:

Շէքսպիրի թարգմանութիւնը պահանջում է շատ տուեալներ՝ բանաստեղծական տաղանդ, հիմնաւոր հմտութիւն անգլիական լեզուի ու մտաւոր բարձր զարգացում: Շէքսպիրը միայն մեծ դրամատուրգ չէ, միաժամանակ եւ մեծ բանաստեղծ է՝ մարդկութեան ու մարդկային հոգեբանութեան վերաբերեալ հիմնական խնդիրները թափանցող եւ վերլուծող փիլիսոփայ: Ներդաշնակ միացեալ յատկութիւններ, որ դարձնում է նրան եղակի հանրամարդկային գրականութեան մէջ: Նրա թարգմանութիւնը լրիւ չի կարող լինել, եթէ վերաբրտագրութեան մէջ խախտուի այդ ներդաշնակութիւնը: Եւ բախտի զարմանալի խաղի շնորհիւ մեր ազգի մէջ երեւան է եկել մէկը, որ կարողացել է մերձենալ այդպիսի մի պատասխանատու գործի, որը հնարաւոր է միայն եւրոպական եւ ռուսական գրականութեան մէջ: Հայ թարգմանիչը զգրկութեամբ կատարել է հայ ընթերցողների համար մի վերին աստիճանի կարեւոր աշխատանք եւս, որը միաժամանակ լոյս է սրբում թարգմանչի պատրաստակնութեան աստիճանի վերայ՝ նրա ձեռնարկած գործի ահաւոր պահանջների դիմաց: Դա շէքսպիրագիտութիւնն է — ուսումնասիրութիւն մի ընդարձակ գրականութեան եւրոպական գլխաւոր լեզուներով, դրա հետ միասին եւ երկի նիւթի ծագման պատմութիւնը, որի արդիւնքը կցում է իւրաքանչիւր երկի թարգմանութեան իւրեւնախարան եւ վերջաբան. հաղորդելով հայ ընթերցողին եւրոպական նշանաւոր քննադատների մեկնաբանութիւնները եւ գնահատութիւնները, հայ թարգմանիչը մոցնում է հայ ընթերցողին եւրոպական մտաւոր միջնորդող շէքսպիրի գաղափարական եւ գեղարուեստական բովանդակութիւնը հասկանալու համար:

Ինքն ըստ ինքեան այս կարեւոր եւ պատասխանատու աշխատանքը եւրոպական եւ ռուս գրականութեան մէջ ընդհանրապէս կատարուում է համապատասխան պատրաստութեան

տէր քննադատները կողմից եւ միացումը  
 թարգմանութեան իրրեւ նախարան: Ներկայ  
 դէպքում հայ թարգմանիչը ստանձնել է եւ  
 այդ բարդ եւ մեծ աշխատանքը, որը այլապէս  
 կը մնար բաց գուցէ մշտապէս: Այսպիսով  
 Շէքսպիրի հայ ընթերցողը եւ, որ ամենակա-  
 րեւորն է, հայ գրականական գեղարուեստա-  
 դէտը զինուում է ամենակատարեալ լապտերով,  
 որին միայն հասել է եւրոպական միտքը Շէքս-  
 պիրի խորութիւնը՝ գեղարուեստական, հոգե-  
 բանական եւ գաղափարական բարդ վեհու-  
 թիւները ըմբռնելու համար: Մասէհեանի  
 թարգմանական ստեղծագործութիւնը գալիս է  
 տալու հայ գրականութեան մի պարգեւ, որ  
 արժէքի ու ծաւալի տեսակէտից նմանը չունի:

Մասէհեանը առաջին անգամ երեւան  
 եկաւ հայ գրականութեան մէջ թարգմանու-  
 թիւներով Բայրոնից, շատ ժամանակ սրանից  
 առաջ Մուրճ ամսագրում: Թարգմանիչի ճա-  
 շակը նիւթի ընտրութեան տեսակէտից, թարգ-  
 մանչական ստեղծագործութիւնը՝ բանաստեղ-  
 ծական արժանիքի կողմից սկզբին արդէն՝ նոր  
 երեւոյթի տպաւորութիւն էին թողնում: Եթէ  
 յաջորդականութիւն միտուէր մեր թարգման-  
 չական գրականութեան մէջ, միայն ողբացեալ  
 Սատտանանին կարելի էր յիշել, որը կարճ միջո-  
 ցում իրրեւ-կայծ փայլեց եւ մարեց:

Մասէհեանը Բայրոնին իսպառ չմոռացաւ,  
 դեռ նորերս դուրս եկաւ Մանֆրէդի գեղեցիկ  
 թարգմանութիւնը, բայց վաղուց նրա ընտրու-  
 թիւնը ծանրացաւ Շէքսպիրի վերայ, ինչ որ  
 բնական էր. Բայրոնից սկսողը, եթէ նա առա-  
 ջադիմում է, Շէքսպիրով կը վերջացնի:

Արդէն 1891ին նա տալիս է Համլէտի  
 առաջին թարգմանութիւնը: Հետզհետէ թարգ-  
 մանեց եւ հրատարակեց

«Ինչպէս կ'ուղէք»

«Ռումբօ եւ Զիւլիխտ»

«Վենետիկի վաճառականը»

«Արքայ Նիլ»:

Կենդանանալով Շէքսպիրի ստեղծագոր-  
 ծութիւնների վերայ, ինչպէս ասացինք, Մասէ-  
 հեանը չէր մոռնում Բայրոնին, որից թարգ-  
 մանած բանաստեղծութիւնները եւ մի ամբողջ  
 պոեմա տպուած են նոյն ամսագրում իննսական  
 թուականների սկզբներին: Ունի թարգմանու-  
 թիւներ Գէօթէի ֆաուստից: Միաժամանակ  
 կատարել է Մասէհեան պարսկերէն թարգմա-  
 նութիւններ Մոլլերից՝

«Պուրսոնեակ»

«Ժլատը»

«Երեւակայական բժիշկը»

«Սկապենի խարդախութիւնները»

եւ ուրիշ երկեր նոյն հեղինակից՝ պարսկա-  
 րեմի ծագման զարկ տալու համար: Այս պիես-  
 ները խաղում էին հայերը պալատի թատրոնում՝  
 երբեմն շահի ներկայութեամբ: Պարսկա-  
 րեմի ծագման զարկ տալու համար... Ծա-  
 գում բառը գործ դրինք, որովհետեւ փորձերը  
 պարսկական բեմ առաջ չբերեցին: Հաջորդի  
 եւ պարսկական հայրենակիցները ոչ միայն գրակա-  
 նութեան կողմից, այլ ընդհանրապէս մինչեւ օրս  
 դեռ մնում են նոյն լսարարիայի մէջ, որին  
 վաղուց է որ ենթարկուել են:

Մասէհեանի ընտրութիւնները եւրոպա-  
 կան միւս գլխաւոր լեզուներից, որոնց նա տի-  
 րապետում է նոյնպէս, ինչպէս անգլիերէնին,  
 բնորոշ են թարգմանչի գրականական նկարագրի  
 համար — վերապատուութիւն նոր դասական  
 գրականութեան, ոգեւորութիւն հանրամարդ-  
 կային հանճարներով եւ գիտակցութիւն նրանց  
 կային համաձայնեցնելու մասին բոլոր ազգերի համար:  
 առաքելութեան մասին բոլոր ազգերի համար:  
 Ինչպէս Շէքսպիրը դրամայի թագաւորն է —  
 Մոլլերը կոմեդիայի: Պատահական չէ, որ պար-  
 Մոլլերը կոմեդիայի: Պատահական չէ, որ պար-  
 սիկ բեմի համար, աւելի ճիշդ՝ պարսկերէնի  
 համար, որովհետեւ պարսիկ բեմ չկար, չկայ  
 եւ այսօր, ֆրանսերէնից ընտրում է Մոլլեր-  
 Եթէ սկսել՝ սկսել կատարելատիպերից,  
 եթէ ստեղծել հետեւողութիւն՝ միայն հետեւել  
 կատարելատիպերին:

Սկսած 1900 թուականից Մասէհեանի  
 թարգմանութիւնները մեր գրականութեան մէջ  
 այլ եւս երեւան չեն գալիս, բնական էր կարծել,  
 որ նա իւր պայմանների մէջ արդէն արեց հնա-  
 րաւորը եւ վերջացրեց իւր դերը: Եւ հասկա-  
 նալի եւ սպասելի էր այդպիսի վախճան: Պետա-  
 կան գործունէութիւն, որպիսին է գիպլոմատիան  
 Պարսկաստանի նման պետութեան ծառայու-  
 թեան մէջ, որը ամէն կողմից անվերջ ոտնձգու-  
 թիւնների առարկայ էր, սովորական ոյժերի  
 տէր մարդու համար արդէն սպառիչ գործու-  
 նէութիւն է: Նոյն իսկ եւրոպական գիպլոմատ-  
 աների շարքերից եթէ երբ եւ իցէ երեւացել են  
 գրական ասպարիզի վերայ, դժբա եղել են ծա-  
 ռայութիւնը վերջացնելուց յետոյ մեմուարներ  
 գրողներ: Մինչդեռ Մասէհեանը վարելով իւր  
 պետական ծառայութիւնը մի թափով եւ որա-  
 կով, որի բնորոշիչը կարելի է համարել այն

փաստը, որ նա հասնում է դեսպանի պատասխանատու պաշտոնին, դեսպանութեան ծանր եւ բարդ զբաղմունքների հետ միաժամանակ՝ կատարում է ինտենզիւ թարգմանչական ստեղծագործութիւն, ընտրելով Շէքսպիրի լաւագոյն երկերը, կատարելագործելով իւր նախկին թարգմանութիւնները, արդէն զինուած շէքսպիրագիտութեամբ. նախ ուսումնասիրում է եւրոպական գլխաւոր լեզուներով գրած Շէքսպիրի նշանաւոր քննադատներին եւ իւր ուսումնասիրութեան արդիւնքը տալիս է հայ գրականութեան իբրեւ յառաջաբաններ եւ վերջաբաններ իւր թարգմանած երկերին:

1916ին Մասէհեանը հեռանալով Բերլինի դեսպանութեան պաշտօնից նուիրուում է աւելի ազատ կերպով իւր գրական կոչման, իւր կեանքի նպատակ դարձնելով ի կատար ածել իւր ընտրած մեծ ձեռնարկութիւնը — տալ հայերէն ամբողջ Շէքսպիրը, որքան այդ թոյլ է տալու մարդկային ժամանակաւոր կեանքը: Ու գործի խոշոր մասը արդէն կատարուած է:

2րդ հատելով թարգմանչական աշխատանքը 1921 թուից սկսում է նա իւր թարգմանութիւնների հրատարակութիւնը սեփական միջոցներով: Արդէն տպագրել է Վիննայի Միութարեան տպարանում նոր թարգմանութեամբ

1. Համէտ
2. Օտելլո
3. Վենետիկի վաճառականը
4. Մակբեթ, ամէնը առանձին հատորով իւրաքանչիւրը 3000 օրինակ:  
Պատրաստ են տպագրութեան համար
5. Արքայ լիր
6. Ռումօ եւ Զիւլիետ
7. Յուլիոս Կեսար
8. Անտոնիոս եւ Կլէոպատրա
9. Կորիոլան
10. Տրոիլոս եւ Կրեսիդա
11. Միմբիլին
12. Տիմոն Աթենացի — ողբերգութիւնները:  
Բացի այս թարգմանութիւններից պիտի տպուին եւ կոմեդիաներ
13. Ինչպէս կ'օղէք
14. Փոթորիկ
15. Ամառնային գիշերուայ երազ — առաջին երկուսը աւարտած, վերջինը կիսաւարտ:  
Սկսել է թարգմանել
16. Ամէն բան լաւ է, որ լաւ վերջանայ
17. Հատ աղմուկ ոչինչի համար:

Մասէհեանի պետական ծառայութիւնը թողնելու գլխաւոր շարժառիթներից մէկն էր ժամանակի ընթացքում իւր մեծացրած նպատակը — չսահմանափակուել Շէքսպիրի մի շարք ամէնից յայտնի երկերով, այլ ձգտել տալու նրա ամբողջական թարգմանութիւնը եւ այժմ ամբողջովին զբաղուած է ստեղծագործական այդ մեծ ձեռնարկութիւնով, բեղմնաւոր հայ գրականութեան համար անպնահատելի արդիւնքներով: Մանաւանդ սրանից յետոյ, ասում ենք սրանից յետոյ, որովհետեւ մայրենի լեզուն նոր է սկսել իւր տիրապետութիւնը մեր հայրենիքում, դառնալով պետական լեզու: Այժմ եւս պատանեկութիւնը իւր ուսման ընթացքում չի խորթանում մայրենի լեզուից, այլ եւ գիտութիւնները սովորում է նրա միջոցաւ: Այժմ է սկսել ստեղծուել մտաւոր պատրաստութիւն ունեցող մայրենի լեզուով ընթերցողների խիտ եւ լայն շարքեր: Այժմ հայ գրականութեան կոչեցեալներին կարելի է ուղղել՝ caveant consules կոչը: Նոր սերունդը ընթերցանութեան նիւթ է փնտռելու: Եղածը՝ ինքնուրոյնը թէ թարգմանականը, շատ է հեռու բաւարար լինելուց: Թարգմանական ստեղծագործութիւնը նոր եւ հսկայ կարեւորութիւն է ստանում, որովհետեւ ազգայինը նոր թափ առնելով հանգերձ դեռ երկար ուղի ունի կտրելու եւրոպականներին նմանելու:

Ինչպէս ասացինք մեր գրականութեան այժմեան շրջանակում, նրա գոյութեան այժմեան պայմաններում, միայն բացառիկ հանգամանքների շնորհիւ կարող էր տեղի ունենալ այնպիսի խոշոր երեւոյթ, որպիսին է Շէքսպիրի թարգմանութիւնը՝ թարգմանչութիւնը, հրատարակչութիւնը եւ քննադատի գործը միացեալ ի դէմս միեւնոյն անձի՝ առանց տարածման հեռանկարի: Քանի որ հայրենիքի հետ դեռ չկայ կանոնաւոր հաղորդակցութիւն, գաղութային հայութիւնն է ներկայացնում հայրենիքից դուրս ստեղծուող եւ երեւան եկող մայրենի լեզուով երկերի միակ միջավայրը, ուր սակայն մենք ահանաւոր ենք լինում մայրենի գրականութեան հանդէպ հետաքրքրութեան համատարած անակութեան: Շէքսպիրի երկերը հայերէն լեզուով եւրոպական հայ գաղթականութիւնը ըստ երեւոյթի պիտի համարէր իւր սեփական սալոնի զարդ, ինչ որ ի հարկէ պատիւ պիտի բերէր իրեն եւրոպական շրջանակում: Բնական էր այդ սպասել, սակայն իրականութիւնը այլ ինչ ցոյց տուեց:

Նոյն իսկ Անդրլիաում հաստատուած հայ  
գաղութների մէջ այդ ենթագորութիւնը չի ար-  
դարացել: Անդրլական շէքսպիրագիտական ըն-  
կերութիւնների մէջ Շէքսպիրի հայերէն թարգ-  
մանութիւնը հետաքրքրութեան եւ հիացման  
առիթ տուեց հայ գրականութեան վերաբեր-  
մամբ անշուշտ եւ սխալ կարծիքի հայերի գրա-  
տիրութեան մասին, իսկ տեղական հայերի մէջ ոչ  
մի հետաքրքրութիւն, ոչ մի տպաւորութիւն:  
Շէքսպիրի թարգմանութիւնները եւրոպական  
հայ գաղութներում շատ շնչին թուով են տա-  
րածուում եւ զարմանալին այն է, ամենից քիչ  
անդրլական հայ գաղութներում: Ազգային  
գիտակցութեան տեսակէտից մահուան դրոշմը  
արդէն նշմարուում է հայ գաղութների վերայ:  
Այս բոլոր հանգամանքները աչքի առաջ ունե-  
նալով հանդերձ, պիտի շեշտենք, որ Մասե-  
հանը հայ գրականութեան իւր մեծ ծառայու-  
թիւնը կատարում է վերին աստիճանի պատեհ  
մի ժամանակ՝ եթէ նոյն իսկ հայ գաղութնու-  
րում բնաւ չտարածուին նրա թարգմանու-  
թիւնները: Մենք արդէն կանգնած ենք նոր եկող  
այն վայրկեանի առաջ, երբ բուն հայրենիքում  
մայրենի լեզուով ստեղծագործութեան համար  
պիտի սկսուի նոր տարեշրջան: Աւաղ որ սկսում  
ենք այդ տարեշրջանը մեր ազգը կիսով տու-  
եա՞ծ: Մինչեւ օրս հայ գրականութեան գոյու-  
թիւնը մի տառապանք էր միայն, որ բնականա-  
բար պիտի արտայայտուէր նրա եւ ծառայի եւ  
՛րակի վերայ: Հայ միջին դասակարգը, այն է  
բուրժուազիան, ներկայացնում էր մի տարր, որը  
իւր նմանը չունի ուրիշ ազգերի մէջ, ազգային  
գիտակցութեան, մտաւոր եւ գեղարուեստական  
պահանջների տեսակէտից կատարելապէս սնանկ,  
որի գլխաւոր եռանդը նոյն իսկ Անդրկովկասում  
էր տայայտուում է նրանում, որքան կարելի է  
արագ այլասեռել իւր սերունդը, խորթանալ  
սեփական արմատից եւ ոչ դի օրդանարար  
չոյսերի, ապրել որպէս մի աւելորդ անդամ  
մարդկային ընկերութեան մէջ եւ ըստ մեծի  
մասին որպէս գլխաւոր պատճառ եւ պատաս-  
խանատու մեր ցեղի մասին ընդհանրացած կար-  
ծիքների: Ահա ինչ պայմանների մէջ էր աճում  
մայրենի գրականութիւնը, եթէ միայն տճիւ  
բառը կարելի է գործադրել նմանօրինակ պայ-  
մանների դիմաց:

Մեր այս դատողութիւնները թող չհա-  
մարուին վերաւորանք այն բացառութիւնների  
անուաններին եւ յիշատակին, որոնց մեր ցեղին  
յատուկ հարթարար երբեմն երբեմն երեւան

է հանում այդ շրջանից, որոնց գոյ-ւթիւնը  
աւելի տպաւորիչ է կացուցանում անապատի  
պատկերը: Եւ այսինքն մեր գրականու-

պատկերը:  
Թոյսեր են զարթնում մեր գրականու-  
թեան ապագայի մասին, եթէ միայն յոյսերը  
կարող են վստահութիւն ներշնչել այս մրկա-  
յօլը եւ ահաւոր անակնկալներով յղել ժամա-  
նակին, ամենաահեղը բոլոր ժամանակներէց, որ-  
պէս իրաւամբ կարող է որակել մանաւանդ հայ  
տարրը: Այս ժամանակի վերաբերմամբ իրա-  
ւամբ կարելի է յիշել հին աւուրց հայ բանաս-  
տեղծի խօսքերը՝ «Երկէք երկին եւ երկիր,  
երկէք եւ ծիրանի ծով»: Դրո՞ք քաղաքակրթու-  
թիւն պիտի ծնուի, թէ մարդկութիւնը ան-  
ցնելու է փոթորկից փոթորիկ: Իսկ բոլոր արհաւ-  
իրքների, զոհերի շարքում մենք միշտ առաջին  
թիկնածուն ենք: Տկարացել է մարդկային  
միտքը, սպառուել է եւ գուշակութեան ընդու-  
նակութիւնը: Խենք չենք, որ ներգործական դեր  
ունենք հանրամարդկային ահաւոր դրամայի  
դուրսէն: Դժբերգութեան մէջ: Երբ որ մեծ  
գուցէ եւ ողբերգութեան են, ասում է Բեռնէն, բազ-  
մայեքը գլորուում են, ասում է Բեռնէն, բազ-  
մայեքը հետեւում են նրանց:  
մաթիւ մանր քարեր գրաման ամէն մի  
Ահա ինչու մէկ է կայանում մեր գրաման ամէն մի  
յոյս տածելիս մեր ազգի ապագայի մասին, մա-  
նաւանդ որ օժտուած ենք չարաբաստիկ ընդու-  
նակութեամբ գրաւուել փորձանքի հմայքով,  
նոյն իսկ փնտռել, եթէ նա չկայ:  
նոյն իսկ փնտռել, եթէ նա չկայ:

Ապագան մեզանից չէ կախուած, մեզանից  
կախուած էր եւ կախուած է — ըմբռնել իրերի  
դուրսիւնը, զանազանել երազն իրականու-  
թիւնից, Այս լաւագոյն ուղղեցոյցը չունէինք,  
դա էր հիմնական պատճառը մեր ազգի ողբեր-  
գութեան:

Վասիլյան անցնենք մեր խնդրին: Մեծ եւ  
ահաւոր անյայտութեան առաջ կանգնած, սա-  
կայն մի խոշոր երեւոյթ պիտի ընդունինք ար-  
դէն պարզուած. հայ գրականութիւնը մտնում  
է նոր տարիշըջան: Բուն հայրենիքում պատա-  
նեկութեան — մեզ անմիջապէս հետեւող  
սեւեռի, ընթերցանութեան գլխաւոր եթէ ոչ  
միայնակ գէնքը լինելու է մայրենի լեզուն,  
գլխաւոր աղբիւրը՝ մայրենի գրականութիւնը:  
Գլխաւոր աղբիւրը, որ մեղանում մի օտար  
լոճաւոր է երեւակայել, որ մեղանում մի օտար  
լեզու, Նոյն իսկ ռուսերէնը այն աստիճան իւրա-  
ջուի, որ նրա միջոցաւ հնարաւոր լինի ազատ  
ընթերցանութիւն: Մենք ունինք շատ մօտաւոր  
անցեալում մեր թեմական դպրոցների փորձը,  
որոնցում ռուսերէն լեզուն աւանդում էր սոսկ  
միայն որպէս առանձին առարկայ: Նոյն իսկ

շրջանաւարտները չէին կարողանում ուսերէն ազատ խօսիլ եւ կարգացածը հիմնօրէն ըմբռնել: Մինչեւ վերջին տարիներս պատանեկութեան ընդհանրութեան ուսման լեզուն ուսներէն էր, որ այժմ տեղի է տուել մեր մայրենի լեզուին, որով մեր պատանեկութեան զարգացման միակ աղբիւրը դառնալու է մայրենի գրականութիւնը: Գաժան պայմաններին մէջ ծագած, դաժան պայմանների մէջ աճած, երբ հեղինակութիւնը սիրագործութեան էր հաւասար եւ հայրերէն ընթերցանութիւնը համարուում էր հայրենասիրութիւն, մեր գրականութիւնը իւր այժմեան վիճակում չի կարող բաւարարութիւն տալ մեր պատանեկութեան: Հայրենի մօքից մենք չենք կարող անհնարինը սպասել: Մօքի սնունդի բացը միայն թարգմանութեամբ կարող ենք մեղմացնել — իսկ բուրովին ծածկել, մեղ համար դեռ երկար ժամանակ կը մնայ որպէս տենչանք: Թարգմանական ստեղծագործութիւնը լրացուցիչ աղբիւրն է ամենայն մի գրականութեան, նոյն իսկ առաջաւոր ազգերի, առանց որի ուժեղ ներմուտքի նա միշտ կը մնայ կիսատ, մանաւանդ նոր քաղաքակրթութիւնը մի ազգ տկար եւ յետաձգ, իսկ այդ տեսակ գրութեան հետեւնքները ծակատագրական:

Մեր ազգի ապագան կախուած է այն գլխաւոր պայմանից, թէ ինչպէս է կրթւում նրա պատանեկութիւնը, մտաւոր որպիսի աղբիւրներից է սնանում նա: Ահա մեր աճող սերնդի վերաբերմամբ ինչ ահաւոր հարցի առաջ ենք կանգնած:

Մեր պատմութեան մէջ կայ այս գրութեան հետ անալոգիա ունեցող վայրկեան: Երբ եւ ինչպէս մենք ոտ կ'ոխնցիմք կուլտուրական ազգերի շարքը: Սոսկ միայն տառերի գիւտը չէր դրա պատճառը: Այն ժամանակուայ մտաւոր պատրաստութիւն ունեցող շրջանը ըմբռնեց հարցը եւ համաձայն իւր ժամանակի պահանջներին եւ իւր հնարաւորութեան սահմաններում փայլուն կերպով կատարեց իւր առաքելութիւնը, որը դժբախտաբար չունեցաւ համապատասխան շարունակութիւն: Թարգմանիչները եղան մեր ազգի հոգեւոր ու մտաւոր վերածնութեան հեղինակները, ազգի հոգեւոր ծնողները եւ այն ժամանակուանից սկսած, դարերի ընթացքում, մինչեւ օրս նրանց գործը եւ անունները չկորցրին մեր ազգի մէջ իրենց հմայքը, իսկ եկեղեցին դասեց նրանց սրբերի կարգը: Ներկայումս, եթէ փորձենք պատկերացնել նոյն օրինակ ինչպիսի

ծաւալը եւ նշանակութիւնը ազգի զարգացման տեսակէ տից, երբ գլխաւորապէս մի դասակարգի, կղերականութեան, մտաւոր պահանջներով չէ սահմանափակուում, աւելի մեծ պահանջի առաջ ենք կանգնած, եւ եթէ չենք գիտակից այդ պահանջին՝ չարագուշակ է այսպիսի երեւոյթը: Հսկայ ծաւալով ծագող պահանջի դիմաց անզօր է մեր այժմեան գրականութիւնը թէ ինքնուրոյնը եւ թէ թարգմանականը: Եթէ այժմ կաղմուէր մի մեծ յանձնաժողով համապատասխան ոյժերից եւ սկսուէր ուժեղ թափով թարգմանութիւն եւրոպական կատարելատիպերից, հազիւ թէ կարելի կը լինէր մի այլ գործ նմանեցնել սրան ըստ նշանակութեան: Փափորկալից պատմական վայրկեանը, ինչպէս ուրագան, արմատահան արեց եւ շաղ տուեց մեր գրողների եւ մտաւոր գործիչների մի մասը: արեւմտեանը ամբողջովին դէպի եւրոպական երկիւնք: Փայլուն չէր նրանց վիճակը անցեալում, իսկ այժմ դարձել են աւելորդ մարդիկ: տարադիրի ցուպը ձեռներին ուժասպառ են լինում, մատնուած դշուժեան ամենադաժան պայմանների, մինչդեռ մեծ դերը կանգնած է նրանց դիմաց: Արտայայտելով այսպիսի միտք, մենք մի վայրկեան սակայն անձնատուր չենք լինում ինքնախաբուութեան, լաւ իմանալով այն միջավայրի կերպարանքը, որը այսօր կարող կը լինէր կաղմակերպել այսպիսի մի մեծանպատակ ձեռնարկութիւն: Անապատից պտուղ չի կարելի սպասել: Մտաւոր եւ գաղափարական ձեռնարկութիւն կարելի է յուսալ մի միջավայրից, երբ նա մի որեւէ մտաւոր եւ գաղափարական բովանդակութիւն ունի: Հայ միջին դասակարգը մանաւանդ զաղութներում այդ չի ունեցել եւ չունի: Քաղաքակրթութիւնից նա իւրացրել է միայն զգեստը: Այս ամէնը աչքի առաջ ունենալով հանգրծ, պիտի յուսալ որ մեծ նախապատրաստութիւններով ձեռնարկուած Շէքսպիրի երկերի գեղեցիկ թարգմանութիւնը այսպիսի մի պատեհ վայրկեանում առանց հետեւողութեան չի մնալ, որքան էլ որ այս օրինակը հաղաւթիւտ բարենպաստ զուգահեռութիւնների արդիւնք լինի, միւս կողմանէ որքան էլ ուժանք լինի հայ գրականական գործիչների վիճակը ներկայ պայմաններում:

Գժուար է երեւակայել աւելի մեծ ծառայութիւն մեր նոր հասնող սերնդի զարգացման գործում եւ նոր գրողներին կատարելատիպեր տալու տեսակէտից, քան դասական գրականութեան մեծ հեղինակների թարգմա-

նութիւնը: Որքան ուղղութիւններ փոխուեցին  
հանրամարդկային գրականութեան մէջ, առաջ  
բերելով գրողներին ազգեցիկ հեղինակութիւն-  
ներ եւ գրականական նոր դպրոցներ, որոնք  
իրենց շրջանի հետ միասին դարձան միայն պատ-  
մութեան նիւթ՝ կեղծ կլասիցիզմը, բոմանտիզ-  
մը, նատուրալիզմը, մահամերձ, եթէ չհամարենք  
արդէն մեռած, տեկագետներ: Աւելին երկու  
ուղղութիւնների աւերիչ հետեւանքները դեռ  
կրում է հանրամարդկային գրականութիւնը,  
մանաւանդ փրանսականը:

(Հարան-իւն):

Յ. ՄԱՂԱԹՆԵԱՆ



## ԱՅԼԵՒԱՅԼՔ

Բառաքննական: — «Հանդէս Ամս-  
րեայ», 1923 Յունուար-Փետրուար թիւին՝  
մատենագրական հրատարակութեանց ամ-  
փոփոյքի շարքին «Բազմավէպ»-ի մէջ Պ. Հր.  
Աճառեանի բառաքննականն ալ առնուած  
էր: «Բազմավէպ»-ը տեսնելու առիթը չու-  
նեցայ, որով կրնայի լիակատար գաղափար  
մը կազմել, քննուած բառերը ինչ առու-  
մով կրնային գործածուած ըլլալ իրենց  
տեղեւոյն վրայ: Բայց Հանդէսի մէջ երբեմն  
ներէն առնելով, բառերէ ոմանց մասին իմ  
ալ կարծիքս կու գամ տալ:

Դէրե՛ հանդէս պարերով, խաղերով,  
տոնավաճառ, շիտակ է, բառը թրք. է,  
Սերաստիոյ բարբառին մէջ Կէրե՛ կ'արտասա-  
նենք, օր. Ջիլէ Կէրե՛ն, Սէյրամանէ Կէրե՛ն,  
մեծ տոնավաճառներ են:

Թարայ՝ տարակուսական (?) զրած եւ  
ապա Կարայ ուղղագրած: Այս ալ թրք.  
Բէօրէ = նուէր, ընծայբառն է. օր. հարսը

իր կեսարոյ՝ կեսրոյ տարած նուէրը  
Բէօրէ կ'ըսուի: Այս բառը Թարայ ուղղագրու-  
թեամբ մեր ռամկօրէն մատենագրութեան  
մէջ գործածուած կայ: Աղուէսի առակին  
մէջ Աղուէսը՝ թակալդը դրուած դմակը  
տեղէն շարժել տալու համար կ'երթայ ա-  
նօթի գայլը կը գտնէ, անոր հետ խօսակ-  
ցութեան կը մոնէ, ի մէջ այլոց կը հարցնէ.  
«ինչ է ձեր Թարայ»: Գայլը՝ «գառ մը,  
թօխի մը կամ «ոչխար» կը յարէ: Աւա-  
զակներն ալ իրենց կողոպուտը Բէօրէ կ'ըսեն,  
որպէս թէ կողոպտած ապրանքները ճամ-  
բորդներ անոնց Բէօրէ բերած ըլլան: Ահա  
այս մտքով է որ Աղուէսն ալ գայլին կը  
հարցնէ:

Զօշ = բարասանք, շիտակ է. Ե. Բու-  
չակ ալ այս բառս գործածած է. «Կին  
որ ի ճօշ անկանի»: Սերաստիոյ բարբառին  
մէջ ասոր բայը ունինք՝ ճօշալ:

Տարայ — տարակուսական (?) զրած է:  
Սերաստիոյ բարբառին մէջ ունինք Թարայ-  
Կէրե՛ = թիստ-ա-Կէր-նէ: Ըստ այսմ Կարայ  
ստուգաբանել կը տեսնուի՝ տեռ-փոր(իկ):

Տարայէլ-ի անցողականը ունինք Սե-  
րաստիոյ բարբառին մէջ — Կարայէլ =  
ստուգաբանելի՝ զոնդող-ցնել. որուն մէջ  
մածնուլ, լերդ կապել, մակալ թիլ իմաստը  
կայ. բայց այս բառը աւելի փոխարեաբար  
կ'առնուի սղան փայփայել, շոյիլ, վրան  
զողզողալ իմաստով:

Երոստաղիմ:

Կ. ԳԱՐԻԿԵԱՆ

